Դրան զուգահեռ, Թուրքիան շարունակում է իր իսկ երկրում քրդերի կոտորածները: Նախորդ տարվա օգոստոսից սկսած՝ քրդաբնակ շրջաններում 58 անգամ հայտարարվել է շուրջօրյա պարետային ժամ, իսկ ղեկտեսներին 11-ից սկսած այդ տարածքներում, այսպես կոչված, հակահամաբեկչական օպերացիայի արդյունքում միայն վերջին մեկ ամսվա ընթացքում զոհվել են 79 խաղաղ բնակիչ, այդ թվում՝ 14 երեխա եւ 18 կին, հայտարարել է Մարդու իրավունքների թուրքական հիմնադրամը: Հիմնադրամը նշել է, որ կես տարվա ընթացքում քրդական բնակավայրերում Թուրքիայի ուժային կառույցների կողմից, ընդհանուր առմամբ, սպանվել են 162 խաղաղ բնակիչ, այդ թվում՝ 29 կին, 32 երեխա եւ 24 հոգի վաթսույն անց մարդ: Թուրքիայի իշխանությունների իրենց երկրում ազգային փոքրամասնությունների հանդեպ սարսափելի կոտորածի դեմ հանդես է գալիս աշխարհի առաջադեմ հանրությունը: 1128 թուրքական եւ արտասահմանյան գիտնականներ հրապարակել են հայտարարություն, որ անվանել են «Մենք չենք լինի այդ հանցագործության մի մասը», որտեղ կոչ են արել թուրքական իշխանություններին՝ դադարեցնել «կոտորածները եւ սպանողը» երկրի հարավ-արելեքսում եւ վերադառնալ բանակցությունների՝ քրդական հարցի խաղաղ կարգավորման համար: Ստորագրողների թվում են աշխարհահռչակ գիտնականներ, այդ թվում աներիկյան փիլիսոփա եւ պատմաբան Նուսր Գունտաշ, որը նշել է, որ «Թուրքիան ԱՄՆ-ի արժեքավոր դաշնակիցն է: Հետեւաբար թիչ հավանակարն է, որ ԱՄՆ-ի կառավարությունը կենտրոնացի զուգակցում գործողություններ՝ առանց հասարակության մասշտաբային ճնշումների»: Գիտնականի կարծիքով՝ ԱՄՆ-ի դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ նախկինում էլ եղել է «հրեշավոր», հատկապես 1990-ականներին, երբ քրդերի հանդեպ ռազմական գործողությունները դարձան «պետական տեռորի աշխարհում ամենաար-

Հարց է ծագում, ի՞նչ օգուտ է քաղել Հայաստանը՝ շուրջ 15 տարի անդամագրվելով Եվրոպայի խորհրդին: Բացի ԵՆԻՎԻ-ում հակահայկական բազմաթիվ դրսևորումների եւ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ Ցեղասպանությունը մերժելու թույլտվության որոշումից, Հայաստանը ոչինչ չի ստացել:

Իհարկե, ոմանք հիմա կիիշեն, այսպես կոչված, եվրոպական արժեքները եւ ծանծանծա Մարդու իրավունքները: Սակայն վերջին իրադարձությունները աշխարհում հերթական անգամ ապացուցում են, որ Եվրոպացիների համար Մարդու իրավունքները հանգեցվում են արվամուկների կողմից սեփական սեռական կողմնորոշումները դրոշակի նման թափահարելու «իրավունքի», իսկ, այսպես կոչված, արեւմտյան արժեհամակարգ ընդհանրապես գոյություն չունի:

ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՏԼԱՏԱԿ Է ՏԱԼԻՍ ԻՐ ԻՍԿ ԱՐԾԵՔՆԵՐԸ

Մարդու իրավունքների մասին երկար ու բարակ բարբառալուց հետո, ավելին՝ այդ հարցը այլ երկրների ներքին գործերի մեջ խառնվելու համար միջոց դարձրած Արևմուտքը այդ նույն Մարդու իրավունքների մասին ամօրջապես մոռացավ իր տան մեջ՝ Եվրամիությունում, երբ կուշտ ու հղփացած Եվրոպան հանդիպեց առաջին իսկ լուրջ խնդիրն փախստականներին ու ահաբեկչության դրսևերույնների:

Իսկ Ֆրանսիայում 3 մլկիթները փակելուց հետո, իշխանությունները փակեցին նաեւ 3 կրոնական կազմակերպություն: Մինչ այդ՝ խուզարկելով դրանց գրասենյակները, ստուգելով համակարգիչների պարունակությունները եւ այլն: Թե ո՞րն էր այդ 3 կրոնական կազմակերպությունների մեղքը, հստակ չի հաղորդվում: Ավստրիայում էլ, որ նրանք կապ են ունեցել ինչ-որ մկլիթի հետ, որտեղ խուզարկության ժամանակ հայտնաբերվել է ատրճանակ: Կարելի է միայն պատկերացնել՝ ինչ վայնասուն կբարձրացնեին Եվրոպացիները, եթե Հայաստանում փակվեր որեւէ կրոնական կազմակերպություն:

Լեհաստանն անցկացրեց փոփոխություններ ՉԼՄ-ների եւ դատարանների համակարգում: Այդ փոփոխություններն արդեն իսկ անվանվեցին որպես ՉԼՄ-ների ազատության սահմանափակում եւ դատական համակարգի անկախության խախտում: Բայց Եվրամիության անդամ Լեհաստանում դա կարելի է անել, եւ ԵԽՏԿ-ն այդ հարցը եւս չի քննարկի:

Այսբանից հետո պարզ է դառնում, որ իրականում արեւմտյան արժեհամակարգ գոյություն չունի: Իրականում այն, ինչ համարում են Մարդու իրավունքներ, ամեն օր խախտվում է հենց նույն Եվրոպայում, Միացյալ Նահանգներում, նրանց բարեկամ Թուրքիայում, Սաուդյան Արաբիայում, եւ այս օրինակները կարելի է անվերջ քննարկել: Իրականում ԵԽՏԿ-ն ընդամենը գործիք է՝ այս կամ այն երկրի ու ժողովրդի վրա ճնշում գործադրելու համար:

Եվ եթե այսօր էլ ԵԽՏԿ-ն ընդունի հակահայկական բանաձեւ, ապա համոզված եմ, որ մենք այլեւս այդ կազմակերպությունում անելիք չունենք՝

զոհն այնքան ժամանակ, մինչեւ այն կշարունակի անտեսել ազգերի ինքնորոշման իրավունքը, անտեսել միլիոնավոր մարդկանց զրկանքները, անտեսել դիկտատոր ղեկավարներին, անտեսել նրանց ազրեսիան այլ պետությունների հանդէպ միայն այն պատճառով, որ այդ ազրեսներն ու դիկտատորները իրենց բարեկամներն են:

ՀԱՅՎ ԲԱՐՈՒԽԱՆՅԱԼՆ ՍԻՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ, ԱՅ ԴՊՏԱԳԱՍԿՈՒ

ՌԵՂԷ Ե ԴՈՒՆԵՐԻ ԵՎ ԳՆԶԻ ԵԹՆՈՍՅԱՆ ԴԵՐՆԱԿՐԸ

Վերջերս Նախ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Ծճարիտյանը, ապա՝ Հնդգեղիկայի եւ բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանը պաշտոնապես խոսեցին Հայաստանին՝ Ռուսաստանի կողմից մարակարարվող բնական գազի սակագների հնարավոր նվազեցման մասին: Ինչքանով է դա ռեալ եւ նվազեցման դեպքում ներհայաստանյան Հնդգեղիկայի շուկայում ի՞նչ էֆեկտ կարող եւք ունենալ:

ԶԱՍԱՐՅԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԻ ԱՌԱՆՁԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այն, որ միանգամից երկու նախարարներ պաշտոնապես խոսեցին գազի գների մասին, դա, անշուշտ, առնվազն գների նվազեցման հավանականության մասին ակնարկող գործն է: Անգամ այս պարագայում, երբ Ե.Զախարյանը փորձեց գերծ մնալ ավելորդ լավատեսությունից. «Դժվար է ասել, թե ինչ սպասենք: Կտեսնենք: Աշխատում ենք»: Մյուս կողմից էլ պարոն Զախարյանի այդ «աշխատում ենք» արտահայտությունն այնքան էլ հուսադրող տեսք չունի: Նկատի ունենք, որ դեռ հասկանալի է պետք, թե այդ ի՞նչ է նախարարն անում այդ ուղղությամբ: Նրա խոսքով Հայաստանի կառավարությունը ռուս գործընկերներին է դիմել այդ գնի վերանայման հարցով: Դրանից միայն այն տպավորություն է առաջանում, որ ի դեմս կառավարության էներգետիկայի նախարարությունը, ասենք, պաշտոնական ցամաքով դիմել է ՌԴ էներգետիկայի նախարարությանը, միգուցե նաեւ միաժամանակ «Գազպրոմին», թե խնդրում ենք գազի գները վերանայել: Ինչպե՞ս է հիմնավորված այդ առաջարկը: Ենթադրաբար, քանի որ այդ մասին խոսում է նաեւ էկոնոմիկայի նախարարը, հայկական կողմը հիմնականում շեշտը պետք է, որ դրած լինի այն բանի վրա, թե ներկայիս գազի գներով հայաստանյան տնտեսության մրցունակությունը թույլ է:

Մյուս կողմից՝ ռուսական կողմին մնան հիմնավորումը որքանով կբավարարի: «Գազպրոմը», իհարկե, ՌԴ իշխանությունների համար նաեւ քաղաքական գործիք է, բայց գաեւ չնունանք, որ այն քաղաքականից ճատ նաեւ տնտեսական կառույց է իր շահերով առաջնորդվող: Իսկ դա մշանակում է, որ եթե Հայաստանը գնի նվազեցման թեման մտցնի «չոր» տնտեսական հարթություն, ապա պետք է առաջին հերթին լրջորեն, անհերքելիորեն հիմնավորի, որ, այո, աշխարհի գների համեմատ նկատելիորեն ցածր մեր ներկայիս 1000 խմ գազի դիմաց 165 դոլար գինը, իրոք, մեծ հարված է հայաստանյան տնտեսական մրցունակությանը: Բայց, դուրը խոսենք, իրոք այդպե՞ս է. կարելի է ցանկացած տնտեսական ոլորտի օրինակով հիմնավորել, որ մեր սահմանին գազի

ասենք՝ 10-15 տոկոսանոց էժանացում այդ տնտեսական ճյուղում մեր ներքին արտադրանքի ինքնարժեքի վրա լավագույն դեպքում միայն 1-2 տոկոսի նվազման էֆեկտ կարող է ունենալ: Մեզ համար, անշուշտ, դա էլ է ցանկալի: Բայց սա «Գազպրոմը», որ նույնիսկ պարտավոր է մեր էներգետիկայի նախարարության պաշտոնական դիմումին արժագանքել ոչ թե քաղաքական հարթությունից, այլ բացառապես իր տնտեսական շահերի տեսանկյունից մոտենալով, կարող է շատ հանգիստ արժագանքել՝ հանուն այդ ինքնարժեքային 1-2 տոկոսի՞ եք այս ծանր վիճակում գազի էժանացում պահանջում, արդոք դա լո՞ւրջ խոսակցություն է: Եվ վերջ, բանակցությունները միանգամից կմտնեն փակուղի: Այսինքն՝ գազի էժանացման խնդրանքը «չոր» քաղաքական դաշտ տանելը, մեղմ ասած, հազիվ թե հայկական կողմի լավագույն ռազմավարությունը լինի: Թեպետ այս դեպքում էլ լուծում կա. մեր պատկան կառույցները, կոպիտ ասած, այս օրերին պարտավոր էին ՌԴ էներգետիկայի նախարարության եւ «Գազպրոմի» դռները «կտրտել», բան չստացվելու դեպքում պատուհաններից ու ծխնելույզներից ներս մտնեին: Այս փուլում ՀՀ էներգետիկայի եւ էկոնոմիկայի նախարարները, որ կարծես թե միայն նստել ու սպասում են ռուսների արժագանքին, պետք է շաբաթներով Մոսկվայում գտնվեին՝ ռուսական էներգետիկ համակարգի բոլոր բարձր շեմերը մաշելով, այս ամենի մեջ ներքաշելով Եվրասիական կառույցների այն աստիճան, որ ռուսական էներգետիկ վերնախաւսում ստեղծվեր այն հոգեբանական տպավորությունը, թե մեկ է, պոկ չենք գալու: Դա էլ, անշուշտ, սակագնի նվազեցման չիր բերի, սակայն հարցը պետական վերին աստիճանի կողմից քաղաքական հարթությունում լուծելու համար լուրջ հիմք կնախապատրաստեր:


ԿՐԱՅԱԿԱՆ ՏՐԱՆՁԻՏԻ ՍԽԵՄԱՆ

Առավել եւս, որ ռուսական կողմից սակագինը նվազեցնելու հոգեբանական պատրաստակամություն նկատվում է: Խոսքը Կրաստանի տարածքով Հայաստան գազի տարանցման սակագնի նվազեցման թեմայի մասին է, որը վերջին ժամանակներս բավականին ընդգծված էր պոլով օրակարգ



մտավ: Դեռ 1990-ականներից սկսած՝ տարանցման համար «Գազպրոմը» վրացներին, ինչպես հայտնի է, վճարում է գազով հայաստանյան մատակարարման 10 տոկոսի չափով: Նույնիսկ Հայաստանին մատակարարվող գազի ներկայիս էժան սակագնի պարագայում 1000 խմ-ի հաշվով Կրաստանը տարանցումից ստանում է 16,5 դոլար: Իսկ իրականում «Գազպրոմը» վրացներին տված այդ գազը հանգիստ կարող էր վաճառել մոտ 200-210 դոլարով, այսինքն՝ Կրաստանը փաստացի տարանցման համար ստանում է 20-21 դոլար այն դեպքում, երբ նույն 1000 խմ-ն 100 կմ տարանցելու համաշխարհային ամենաճոխ գները 2-3 դոլարից ավել չեն կազմում, այսինքն՝ էլի շքեղ հաշվարկներով, Հայաստան եկող գազը համաշխարհային ռեալ գներով հաշվարկելով Կրաստանը պետք է ստանար մոտ 10 դոլար: Այսպիսով մեր ավանդակակցի միջազգային գնացուցակների անցնելով «Գազպրոմը» կխմայի առնվազն 6-7, իսկ ավելի ռեալ մոտ 10 դոլար, եւ միանգամից այդ չափով հայաստանյան գազամատակարարումն էժանացնելու առավել քան խելքին մոտ կդառնար: Եվ նկատենք, որ ինչպես հուշում է Կրաստանի հետ բանակցությունների անցած շաբաթ տեղի ունեցած փուլը՝ «Գազպրոմը» հենց այդ ուղղությամբ էլ մինչեւ վերջ «սեղմուն» է: Համեմայնդեպս՝ դա է հուշում նաեւ այն նրբերանգը, որ նախորդ բանակցային փուլերի օրինակով Կրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կ. Կալաձեի հետ հանդիպեց ոչ թե «Գազպրոմի» նախագահ Ա. Միլլերը, այլ նրա ենթակայինը. դա նման է «Գազպրոմի» կողմից ակնարկի մենք մերն ասել ենք, մնում է, որ դուք կողմնորոշվեք: Այսինքն չհամաձայնվելու դեպքում «Գազպրոմը» ամենայն հավանականությամբ կգործադիր իր սպառնալիքը Հայաստանի գազամատակարարումը կիրականացնի Իրանից:

ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ Է



ԵՎ ԵՐՄԵՐԻ ԿԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ... ՀԱՄԱԾԱՅՆԵՎՈՒ ԵՆ ԱՌԱՋԻԿԱ ԿԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԵՐԸ:


Մրանք, անշուշտ, ապագայի հետ կապված հուսադրող երանգներ են, բայց գործնական տեսանկյունից դրանք ի՞նչ տեսք կստանան, մի շարք գործոններից է մնում կախված: Տեսանկյունից հայ-իրանական տնտեսական հարաբերություններն այսպես թե այնպես, որոշակիորեն կզարգանան, եւ իր տնտեսական պոտենցիալը հետ ստացող Իրանի կարգի պետության հետ երկկողմ զարգացող հարաբերություններն արդեն իսկ Հայաստանի համար օգուտ են անկախ նրանից, թե այդ հարաբերությունները մինչեւ ուր կհասնեն: Այլ հարց է միջազգային հարաբերությունների թեման...

Իրանի հետ նավթագազային համագործակցության հարցը: Բայց նաեւ ընդգծված դիրքերում էր իրանական նավթահանքի եւ երկաթուղային ենթակառուցվածքների զարգացման, ազատ առետարի գոտիների ձեւավորման հարցը: Այսինքն դժվար չէ կռահել, որ խոսքը չինական «Մետաքսի ճանապարհի» իրանական ուղղության գազաքանակ մասին է, եւ Եվրոպայում էլ Ռուսիանին ամենայն հավանականությամբ՝ այդ առետարային ուղիների զարգացման թեման է քննարկելու: Ընդ որում նոր բան չէ, որ «Մետաքսի ճանապարհը» Իրանից Եվրոպա հասցնելու հարցում կան ուղիների սահմանափակության խնդիր, եւ այս տեսանկյունից եւս հարավկովկասյան տարածաշրջանի դերն առավել քան կարեւորվում է՝ այդ ամենից բխող քաղաքական խնդիրների մի ամբողջ փնջով, այդ թվում

ՄՐԱՍՔԻՆ

ղաքականությունը կառուցել: Այսինքն կան հստակ եւ զարգացող կապեր Ռուսաստանի հետ: Բայց միաժամանակ այս օրերին Թեհրանում էր Հինաստանի առաջնորդ Սի Յզին-ային, եւ Ռուսիանիի հետ հանդիպումից հետո հայտարարվեց երկկողմ առետարաշրջանառությունը՝ տարեկան 60 միլիարդ դոլարի հասցնելու ծրագրերի մասին: Ամօրջապես էլ Ռուսիանին մեկնում է Եվրոպա, եւ Այսինքն էլ թեման հիմնականում տնտեսական կապերի խորացման մասին է: Ընդ որում՝ Սի Յզինայի այդ օրակարգում, անշուշտ, դրված էր

Իրանի հետ նավթագազային համագործակցության հարցը: Բայց նաեւ ընդգծված դիրքերում էր իրանական նավթահանքի եւ երկաթուղային ենթակառուցվածքների զարգացման, ազատ առետարի գոտիների ձեւավորման հարցը: Այսինքն դժվար չէ կռահել, որ խոսքը չինական «Մետաքսի ճանապարհի» իրանական ուղղության գազաքանակ մասին է, եւ Եվրոպայում էլ Ռուսիանին ամենայն հավանականությամբ՝ այդ առետարային ուղիների զարգացման թեման է քննարկելու: Ընդ որում նոր բան չէ, որ «Մետաքսի ճանապարհը» Իրանից Եվրոպա հասցնելու հարցում կան ուղիների սահմանափակության խնդիր, եւ այս տեսանկյունից եւս հարավկովկասյան տարածաշրջանի դերն առավել քան կարեւորվում է՝ այդ ամենից բխող քաղաքական խնդիրների մի ամբողջ փնջով, այդ թվում



Գրեթե մեկ ամիս է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնն աշխատում է առանց գլխավոր դերիժոր Կարեն Դուրգարյանի: Չնայած վերջին օրերին նվազախմբի երաժիշտները Դուրգարյանին կրկին իր պաշտոնին հետ վերադարձնելու խնդրանք պահանջով նամակ էին գրել 33 նախագահին, բայց ըստ աշխատակիցների թատրոնում ոչինչ չի փոփոխվել, ամեն ինչ ընթանում է իր հունով: «Իրավունքի» հետ գրույցում թատրոնի դերիժոր-կոնսուլտանտ, Կոնսերվատորիայի պրոֆեսոր, 33 ժողովրդական արտիստ ՅՈՒՐԻ ԴՎԱԹՅԱՆԸ, ով երեք անգամ եղել է թատրոնի գլխավոր դերիժորը, կարեւորություն չստանալով այդ գլխավոր պաշտոնին՝ ասաց, որ թատրոնում, հնարավորության դեպքում, թարմ արյուն ու նորություն է պետք:

«ՎԼԽԱՎՈՐ ԴԻՐԻՇՏՐ ԼԻՆԵՆԻ ՉԱՄԱՐ ՆԱԽ ՊԵՏԷ Է ԼԻՆԵՆ ԴԻՐԻՇՏՐ»

- Այսինքն՝ գլխավոր դերիժորի հաստիքն ավելորդ է:

- Դեռ 2 տարի առաջ այդ հարցը կար, գնացիք տիկին Մախարադի մոտ, խոսեցինք, հետո մախարադի տնօրեն Կամո Գոլիանցինսկայան ասաց՝ լավ, ձեռք չտանք, տղերք ջան, յուրա մանցնեք: Ինչ վերաբերում է գլխավոր դերիժորի հաստիքին, գլխավոր դերիժոր լինելու համար, մախարադի է լինել դերիժոր: Եթե դերիժոր ես, ներկայացում եմ տալիս, որ բեմադրես, կամ սիմֆոնիկ նվագախմբով համերգ տաս: Շնորհով մարդ ես, ուրեմն անում ես քո չափի մեջ: Գիտեմ, որ դերիժոր

վում են՝ առաջիկայում գլխավոր դերիժորի պաշտոնում լինելու համար:

- Օրինակ՝ իտալացի փայլուն դերիժոր Ջանլուկա Մարչանոյին զեղամը իր կապերով հրավիրել է ոչ որպես գլխավոր դերիժորի, այլ մի շարք ներկայացումների համար: Բացի դա, անհամեստություն չանեն, մեկ այլ դերիժոր, իմ տղան, որը ժամանակին աշխատել է այս թատրոնում, հիմա Փարիզի սուպեր կոնսերվատորիայի պրոֆեսոր է, մտքեր կան իրեն էլ հրավիրեն ու մի ներկայացում տան դեկավարի: Քավ լիցի, նա Փարիզում ապահովված ապրում է, բայց եթե պետք է օգնել՝ կգա: Գիտեմ ի՞նչ վատ է, նվագախմբում այդ աղմկարարները հասկանան, որ մեծ մարդիկ են գալիս, իրենց մի քիչ ավելի կստուգեցնեն:

- Ստացվում է, որ Դուրգարյանը փակել էր թուրի «օղորդ» եւ յուր չէր տալիս, որ նոր անուններ գան թատրոն:

- Ոչ թե թույլ չի տվել, այլ ինքն է արել: Իսկ



ՈՉ ԹԵ ԳՐՈՂՆԵՐ, ԱՅՆ «ՄՐՈՂՆԵՐ»

20-րդ դարի պոետիկայի մեծությունների կողքին այսօրվա որոշ ժամանակակից գրողներին գրող համարելը, պարզապես, հանցագործություն կլինի: Նրանց ընդամենը կարելի է կոչել ոչ թե գրողներ, այլ «մրողներ», բառիս բուն իմաստով: Ովքեր ոչ միայն թուղթ են մրում, այլ նաեւ մարդկանց ուղեղներ՝ իրենց հիմար գրվածքներով:



«Սարեր կանաչ խաղաղ սարեր կանաչ խաղաղ մեկի վրա մի քիչ ծյուն սեմինար աղվերան լրագրողներ շուն ուզում եմ բանաստեղծություն գրեք բայց այքերս փակվում եմ սարեր կանաչ խաղաղ լրագրողները չկան մեմակ շուն վազում և արդեն հասել ավերջին ոլորանին ու չի լինի շուտով կնճառ սարերը կանաչ խաղաղ մեկի վրա դեռ մի քիչ ծյուն...»:

Ոչ, սա տպագրական վրիպակ չէ, ոչ էլ թյուրիմացություն, ուղղակի, ներողություն խնդրելով մեր ընթերցողներից, նշենք, որ այս տողերի հեղինակը ժամանակակից բանաստեղծուհի Սարինե Պետրոսյանն է, ով իր պոետիկան չհասկացողներին հիմար է անվանում: Եթե լսենք, այս գրողին, պարզվում է՝ Հայաստանի 99%-ը հիմար է, որ չհասկանալով՝ իր պոետիկան որակում է հիմար: Համեմայնեցեք, սա բանաստեղծուհու տեսակետն է:

Օրինակ, բլրգեր Կարեն Քոչարյանն իր ֆեյսբուքյան էջում ցիտավում է Պետրոսյանի «Եթե իմ բանաստեղծությունը չէք հասկանում, ուրեմն հիմար եք» միտքը՝ մեկնաբանել է:

«Չ. Գ. Մարդ կ պոետ է Մարդ կա ծիծու Մարդ կա ապրում է չգիտես ինչու: /ց/ հաթաբալարդ»:

Ինչեւէ, գուցե արեւմտամետ կերակրամանից սնվող բանաստեղծուհուն հենց արեւմտամետները հասկանան, ո՞վ գիտի:

Կույտը մշակեց ԼԻԼԻԹ ԵՐԻՎԱՆՐԱՅԱՆ

ԴՎԱԹՅԱՆԸ ԴՈՒՐԳԱՐՅԱՆԻՆ. «ՈՐ ԴԻՐԻՇՏՐՈՒՅ ԱՌԱՋ «ՎԼԽԱՎՈՐ» ԲԱՌԸ «ՊՎԳՈՆԻԴ» ՎՐԱ ՉԻ ԳՐՎՈՒՄ, ԽԱՆԳԱՐԵԼՈ՞Ւ Է ՂԵԿԱՎԱՐԵԼ»

«ՈՒՐԱԿԻ ՊԱՐԸ ԹԵՄԱՆՈՒՄ ԵՆ»

- Անշուշտ, կան երաժիշտներ, որոնց այդ իրավիճակը հուզում է: Դեմոկրատիկ երկիր է, իրենց կարծիքն են հայտնում, բայց նվագախումբը հիմնականում հանգիստ կուլեկտիվ է, ուղղակի այդ մարդիկ որոշ չափով պահը թեժացնում են՝ գրգռում:

- Ստացվում է՝ Դուրգարյանի կողմակիցներն են հրահրում:

- Անշուշտ, եւ դա բնական է: Վերջերս մախարադի ասաց, որ ստեղծագործական կուլեկտիվներում չի կարող ամեն ինչ համոզարտ գնալ, եթե այդպես է, ուրեմն՝ այնտեղ կյանք չկա: Թատրոնը թանգարան չէ, սիրում է թարմություն, եւ այն չճացած կուլեկտիվները, որ մեկին են վարժվում ու, այսպես ասած, «ախպոր տղի պես» են իրար հետ վարվում, սխալ է: Կուլեկտիվում 5-6 հոգի չեն ուզում, թող դիմում գրեն դուրս գան, ինչու են ամբողջ կուլեկտիվի անունից խոսում:

«ՎԱՅՆԱԿԻ ՄՈՑ ԿԱՆԳԱՆՉ ՅՈՒՐԱՅԱՆՅՈՒՐ ԴԻՐԻՇՏՐ ԱՐԴԵՆ ՎԼԽԱՎՈՐ Է»

- Երկար տարիներ աշխատել եք թատրոնում, նման իրավիճակ պրակտիկայում եղել է:

- Ժամանակին Հայաստանում հայտնի մի դերիժոր կար, ազգանունը չեմ ասում, երբ նրան առաջարկվեց, որ գլխավորից իրաժարվի, նույն պատմությունը եղավ: Այդ ժամանակ մեզ կանչեցին մախարադի, մասցի, որ ստեղծագործական կուլեկտիվը, լինի 50, թե 5000 հոգի, պետք է ունենա մի դեկավար, երկուսը լինել չի կարող: Եթե համաշխարհային մեծություն զեղամ Գրիգորյանը իրավիճակ է որպես գեղարվեստական դեկավար, ուրեմն դեկավարությունը մտածում է թատրոնը առաջ տանելու մասին: Եթե թատրոնում գեղարվեստական դեկավար կա, երկրորդը չի կարող լինել, որովհետեւ օպերան միայն նվագախումբը չէ, կա բալետ, երգչախումբ, նվագախումբ, մենեճիզների խմբեր: Վահանակի մոտ կանգնած յուրաքանչյուր դերիժոր արդեն գլխավոր է:

րից առաջ գլխավոր բառը «պագոնիդ» վրա չի գրվում, քեզ խանգարելով՝ է դեկավարել, իհարկե չի խանգարելու: Այս թատրոնում 3 անգամ նշանակվել եւ 25 տարի եղել են այդ գլխավորով սկավոր դերիժորը, բացի դրանից, եղել են նաեւ դերիժորական կուլեկտիվի նախագահ, որն ի պաշտոնե կատարում էր այդ գլխավոր դերիժորի ֆունկցիան: Չեքիջանի պես մարդը, մենք մոտ ընկերներ ենք, ասաց՝ Յուրա ջան, արդեն գեղարվեստական դեկավար եմ, ու երկու գեղդեկ չի կարող լինել, բայց ուզում եմ, որ կուլեկտիվի դեկավարը լինես: Նույնը նաեւ Օհան Դուրյանն ասաց՝ է, Յուրի, կուլեկտում, որ դու այդ պաշտոնում լինես... Եվ շատ հանգիստ աշխատում էինք, այդ ժամանակ չկար այդ գլխավոր դերիժոր կոչված իմսոխոսողը: Գիտեմ Դուրգարյանի աշխատավարձը թողնում են նույնը, որ ներկայացումն ուզում է, կարող է դեկավարել, ձեռքից չեն վերցնում, այդ գլխավորը որ չկա, պիտի սենեկե՛ս, կախվե՛ս:

«Ո՞Վ Է ԽԱՆԳԱՐՈՒՄ, ԹՈՂ ՊԱ, ՈՐ ՆԵՐՎԱՅԱՆՅՈՒՄ ՈՒՋՈՒՄ Է՞ ՂԵԿԱՎԱՐԻ»

- Դուրգարյանին առաջարկվել է չէ՞, մնալ թատրոնում:

- Իհարկե, հիմա էլ են առաջարկում, ո՞վ է խանգարում, թող գա, որ ներկայացումն ուզում է՝ դեկավարի: Ուղղակի, այդ պաշտոնը դառնում է ոչ թե գլխավոր, այլ առաջատար դերիժոր: Գեղդեկն է թատրոնի անբողջ կուլեկտիվների համար պատասխանատու, եւ եթե ուզում է դերիժորներ, բալետմեյստերներ, արտիստներ հրավիրել, պետք է միայն ողջունել: Ամեն դերիժոր կգա ու իր ֆունկցիան կանի նվագախումբում: Կա աղմկիստարտիվ դեկավարություն, իսկ ամեն կուլեկտիվում՝ կոնցերտմեյստերներ: Բայց դրանից տրագեդիա սարքել ու բուն դարձնել չի կարելի: Մեր գործը սիրում է թարմություն, չի կարելի տեղում դրվել: Իսկ անկախ քո տաղանից, եթե միշտ նույնն ես մնում, կրկնվում ես, դա արդեն վատ է: Եթե կա հնարավորություն, ապա թարմ արյուն եւ նորություն միշտ պետք է թատրոնում:

- Այսինքն՝ այդ թարմ արյունը թատրոն կրեթեն այն մարդիկ, որոնց անունները ջրջանառ-

այսօրվա գեղդեկն ավելի հեռում է նայում, ուզում է փայլուն երաժիշտների հրավիրել: Մենք Մյունխենում, Դրեզդենում ունենք դերիժորներ, ու այդ մարդիկ մի քիչ ավելի կարող են մեր նվագախումբին տալ, քան եղածները, այս մասին էլ է պետք մտածել:

«ՄԻՆՉ ԴՈՒՐԳԱՐՅԱՆԻ ՉԱՄԵԼԸ, ԳԻՏԵՆԸ ԻՐԵՆՑ ՄԱՍԻՆ»

- Պարոն Դավթյան, ասում են, որ Դուրգարյանը թուրից լավ գիտեր, թե ում ընդունելու կամ չընդունելու նվագախումբ:

- Երիտասարդական նվագախմբի երաժիշտները, որոնց մենք մաղով ենք անցկացրել, մեծ մասն իմ օգնությամբ Օպերային թատրոնում են: Այնպես որ, մինչեւ Դուրգարյանը, արդեն գտնե գիտեի իրենց մասին: Նվագախումբը Կոնսերվատորիայի մեր երեխաներով է աճում է, մենք ենք դասավանդում, չե՞ք իմանում, որ լավն է, որին ընդունենք, որին՝ ոչ: Նախքան իրեն հասնելը, մենք գիտենք արդեն:

- Ասվում է նաեւ, որ այս 15 տարիների ընթացքում, մասնագիտական առումով Դուրգարյանն այն չէր տալիս, ինչն անհրաժեշտ էր:

- Մեծ Ստանիսլավսկին ասել է, եթե թատրոնում ամեն ինչ նույն կերպ խաղացիր, երգեցիր, նվագեցիր եւ չափ տվեցիր, շատ վատ է: Պիտի միշտ լինի փոփոխություն: Դա դաժան արվեստ է, պիտի ամեն անգամ նորություն ունենաս, իսկ հինը պահելը քո պրոֆեսիոնալիզմն է: Օրինակ՝ «Վլմաստի» վերջին 3-4 բեմադրությունն իմն է եղել՝ ամեն անգամ նոր ռեժիսորների հետ: Միշտ ասել եմ՝ թատրոնը թանգարան չէ, պիտի անընդհատ նորություն լինի: Ասենք, իմ դեկավարած այսօրվա «Կարմենը» ձեզ դուր եկավ, վաղը նույնը տեսնե՞ք՝ դուր չի գա: Կարող է շատ պրոֆեսիոնալ դեկավարներ 5 «Կարմեն», բայց 6-րդում էլ չկարողանան նորություն տալ, եւ մյուսը գա, թարմություն բերի: Թատրոնն առանց այդ պրոցեսի, թատրոն չէ:

- Եթե 5 «Կարմեն» դեկավարելուց հետո, 6-րդը ուրիշ գա, Դուր չէ՞ք սեղծել:

- Բոլորովին, գոհ կլինեմ: 1-2 «Կարմեն» հետո, կրկին կգամ՝ էլի հետաքրքիր կլինի, այս է ամբողջ հարցը:

Զրույցը ԼԻԼԻԹ ԵՐԻՎԱՆՐԱՅԱՆԸ

«ԼԵՆԻՆԱՅԻՆ ՊԱՐԸ» ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ Է

«ՅՈՒ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԲԱՆԴԱԿԻ ՄԵՋ ՌՈՒՄԲ ԴՆԵԼ, ՈՐ ԱՅՆ ՆՈՐԻՑ ԶԿՈՂՈՊՏԵՆ»

Երեւանի «Դվին» հյուրանոցի բակում տեղադրված «Լեննային պար» խմբաքանդակը, որը փարիներ առաջ անհայտ անձնաց կողմից գրեթե կիսով չափ նվաստվել էր շուրջով ամբողջովին վերականգնված կներկայացվի: Այս մասին «Իրավունքի» հետ գրույցում հայտնեց քանդակի հեղինակ ՏԻԳՐԱՆ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆԸ:

Նրա խոսքով՝ վերականգնումը վերջնական փուլում է, քանի որ այս պահին «Դվին» հյուրանոցում ընթանում են շինարարական աշխատանքներ եւ կշարունակվեն մինչեւ 2018 թվականը, դեռեւս հայտնի չէ, թե երբ տեղի կունենա բացումը: Խմբաքանդակը վերականգնելու ընթացքում, Տ. Արզումանյանը այնպես է աշխատել, որ քանդակի արտաքին տեսքի մեջ որեւէ փոփոխություն տեղի չունենա: 1973 թվականին ստեղծված քանդակը վերականգնելու համար քանդակագործը բացի սեփական հիշողությունից, օգտվել է նաեւ իրն լուսանկարներից. «Տարիներ առաջ

մտածելակերպն այլ էր, այժմայն: «Լեննային պարը» պատկանում է Երեւանի քաղաքապետարանին եւ գտնվում է Մշակույթի նախարարության հուշարձանների պահպանության կոմիտեի հոգածության ներքո: Գնարավոր է, որ այդ գերատեսչությունները որոշեն եւ քանդակը տեղափոխեն մեկ այլ վայր: Ցանկությունս մեծ է, որ քանդակը մնա իր այսօրվա տեղում, եթե իհարկե հյուրանոցի սեփականատերերը դրան պատրաստ լինեն»,- նշեց քանդակագործը:

Չգանկանալով դեպքերից առաջ ընկնել՝ Տ. Արզումանյանը նաեւ տեղեկացրեց, որ բանակցություններ է տանում՝ քանդակը



հարմարավետ վայրում տեղադրելու համար: Իսկ այն պահպանելու միակ ծանապարիք ըստ քանդակագործի՝ խիստ վերահսկողությունն է. «Չու չե՞նք կարող քանդակի մեջ ռուբը դնել, որ այն նորից չկողորայ

տեն: Պետք է վերահսկողությունը խիստ լինի, եւ տարածքում տեղադրվեն տեսախցիկներ»,- եզրափակեց Տիգրան Արզումանյանը:

ԶԿԱՐԸ ԽԱՉԱՏՐԱՅԱՆ

ՄԻ ԳՈՐԱՅԻՐ

Ճանապարհային ոստիկանությունից հայտնում են, որ այսուհետ իրենք ոստիկանապետի հրամանով շարժվելու են Շարիաթի օրենքներով՝ գողացողի ձեռք կտրելու են:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

(ԱՐԱՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՏՈՒՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԶԱՆԴԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ, ԳՅՂ-Ի ԼՈՒՆԼՈՒ ԱՌԹԿ)

ԳՅՂ-ից հայտնում են, որ իրենք իմացել են, թե խոսքը ԳԱԿ-ի Արամ Մանուկյանի տան մասին ա, իրենք չեն իմացել, որ առաջին հանրապետության ԳՅՂ-ական Արամ Մանուկյանի տունն են քանդում:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԷՅԵՐԻՑ (ԱՇՈՏ ԱՐԱՔԱՐՅԱՆԻ «ՂԱՐ 21» ԳՆՈՒՄՍԱՐԵՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱԿՎՈՒՄ Է՝ ԼՈՒՐԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ)

Բուժնաշի դարաշրջանն ավարտվեց խոզի գրիպի համաճարակի ժամանակ:

ՆԵՐՍԸ ԱՎԵԼԻ ԱՊԱՅՈՎ Է ԶԱՆ ԴՈՒՐԱԸ

Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից հայտնում են, որ Նորքի զինված խմբի գործով վերջերս ազատ արձակվածները խնդրել են, որ իրենց խոզի գրիպի համաճարակից հետո նոր ազատ արձակեն:

ԱՆՈՐԺԱԿԱՆ ՈՒՏԵԼԻՄ Ա ԲԱՅՎՈՒՄ

Ըստ քաղաքագետների՝ չնայած ԳՅՂ-ն կոալիցիա մտնելու համար բավարար կադրեր չունի, սակայն մեծ այսործակ ունի:



ԱՅԼՆԵՐԱՆՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ (ՈՌԵԲՏ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԱԸ 2000 ՈՌԼՈՒ ԶՈՒԳԱՐԱՆԻ ԹՂԻ ՊԱՅՄԱՋԱՐ ԷՆ ԵՐԵՎԱՆՍԵՐԵԼ ԵՎ 4200 ԴՐԱՄ ԱՐԺՈՂՈՅԱՆ 100 ՕՂԱՓՈՒԻՉ)

ԳՅՂ-ից հայտնում են, որ զուգարանի թղթի մեծ քանակի պահանջարկը պայմանավորված է վերջինիս օգտագործման լայն սպեկտրով, այն օգտագործվում է նաև որպես անձեռոցիկ, իսկ թանկ օդափոխիչները նաև որպես օձանելիք:

ՀԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄԵՐ



«ԻՐԱՎՈՒՆԷ» ինչպես նաև՝ «КОМСОМОЛЬСКАЯ ПРАВДА В АРМЕНИИ» և «АРГУМЕНТЫ НЕДЕЛИ АРМЕНИИ» թերթերի ընթերցողներին սիրով հայտնում ենք, որ սկսվում է

2016 թվականի բաժանորդագրությունը:

Հարգելի՛ ընթերցողներ, բաժանորդագրվե՛ք, որպեսզի դուք ստիպված չլինեք առավոտ կանուխ արթնանալ և շտապել մոտակա կրպակ կամ կրպակից կրպակ՝ կորցնելով ձեր ժամանակը՝ փնտրվող թերթերը ձեռք բերելու համար:

Դուք կարող եք բաժանորդագրվել նաև էլեկտրոնային PDF տարբերակով:

Մեր ներկայացուցիչը կայցելի ձեզ և կծեակերպի բաժանորդագրությունը:

Նախատեսված են զեղչեր եւ նվերներ՝ մինչ 2016 թվականի հունվարի 31-ը բաժանորդագրվողների համար: **ՆՈՐ ՏԱՐԻՆ** սկսեց միասին:

Հեռ.՝ 010 53 90 11, 010 53 67 30, 091 41 32 95

Էլ. փոստ՝ iravunk@iravunk.com

ISSN 1629-2240 7 7 1 5 2 9 2 2 4 0 0 7

ԳՈՎԱԶԴ (010) 53-67-30 (091) 49-60-97

ԽԱՋԱԿ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16

Հորիզոնական: 1. Հնչյունի արտասանական տարբերակ: 7. Կրակխառնիչի «գրական» ծածկանուններից: 8. «Լուրը շալակին» ուղերոր: 9. Պաշտելի արարած, որին ձգտում են նմանվել: 10. Որեւէ բանի ամենահիմնականը, ներքին բովանդակությունը: 11. Անգլիացի ռոք-երաժիշտ, անունը՝ Միկ: 15. Թմբուկին հարվածելու ձայնը: 16. «Արեւելյան կողմնորոշմամբ կայսերական» տորթ:

Վերականգնողական: 1. Ալիշան 7. Որոնող 8. Բեքիաթ 9. Օվազիա 12. Շքախոսը 13. Ատաշե 16. Անհիմն 17. Կճռական 21. Նշմար 22. Ռազմերգ 26. Ջանքիա 27. Ուժացում 28. Քրդական 29. Պատանի 30. Դիքենս 34. Չինարի 39. Նիազարա 40. Պապիրոս 41. Ուսանելի 42. Կարակոլ 43. Տրիլոն

www.info-market.am

RADIO FM 103.5 ԴՁԱԳԱՆԷ

«ԼԵՎ ԳՐՈՒՂ» ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՄԵՆԲ 16 ՏԱՐԵԿԱՆ ԵՆԲ «Իրավունքը գիտություն է բարու և արդարի մասին»

Հեռ. (010) 56-80-80 E-mail: garuna@aminco.com www.levgroup.am

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄՏԻԹԱՐՅԱՆԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը Բուճեսլիգայի ընդմիջումից հետո էլ շարունակում է ապացուցել, որ, անկասկած, իր լավագույն շրջանն է ապրում Դորպմունդի «Բորուսիայի» կազմում: Համենայնդեպս՝ այս մրցաշրջանի մեկնարկից սկսած՝ Մխիթարյանը, ով անցած տարի երբեմն քննադատների թիրախում էր հայտնվում, գերմանական ակումբի համար, իրոք, դարձավ առանցքային խաղացող:



Լավագույն շրջանի «մեղավորը» ըստ Մխիթարյանի՝ Թոմաս Տոլիսելն է: «Շատ ուրախ եմ, որ նրա հետ աշխատելու հնարավորություն ունեմ: Որովհետև իսկապես, մեր առաջին զրույցի ժամանակ նա ինձ ասաց. «Միկի, ես կարող եմ քեզ բարձրակարգ խաղացողի մակարդակի հասցնել»: Եվ այո, մի կողմից կասկածներ ունեի դրա հետ կապված, որովհետև ես իսկապես վստահ չեի, որ վատ մրցաշրջանից հետո նա կարող էր ինձ բարձրակարգ խաղացող դարձնել: Բայց նա արեց դա, ու ես երախտապարտ եմ նրան»,- Մխիթարյանի խոսքը փոխանցում է Deutsche Welle-ը: Հենրիխ Մխիթարյանը նաև հույս է հայտնել մրցաշրջանն ավարտել մրցաշարային աղյուսակի վերնամասում: «Ուզում եմ մեզ ամենաբարձր տեղերում տեսնել, որովհետև, իսկապես, այսպիսի ֆուտբոլով մենք արժանի ենք ամենաբարձր երկրորդ հորիզոնականին: Ամենաբարձր: Մենք պայքարելու ենք երկր տարի Չեմպիոնների լիգայում տեղ գտնելու համար, հետո վերադառնանք Բեռլին DFB-Pokal-ի համար, երկրպա լիգայում էլ հնարավորինս առաջ գնանք: ԲԻՄՏԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Փաստ է նաև, որ Մխիթարյանը ոչ միայն «Բորուսիայի» կազմում, այլ, առհասարակ, Բուճեսլիգայում է իր ցուցանիշներով առաջնային դիրքերում: Այսպես՝ «Whoscored.com»-ի վարկածով Հենրիխը 17 խաղի արդյունքներով ստացել է 8.05 գնահատական և ճանաչվել է ամենաբարձր միջին գնահատականն ունեցող ֆուտբոլիստը Գերմանիայի առաջնությունում: Ամենահետաքրքիրն այն է, որ Մխիթարյանն այս ցուցանիշով առաջ է անցել Մյունխենի «Բավարիայի» երեք ֆանտաստիկ ֆուտբոլիստներից՝ Դուգլաս Կոստայից, Ռոբերտ Լեանդրոյից և Թոմաս Մյուլերից: Արձակուրդային փուլում Մխիթարյանի հնարավոր տրանսֆերային խոսակցություններից զատ՝ շրջանառվում էր այն հարցը, թե արդյոք հայ ֆուտբոլիստը կկարողանա՞ մրցաշրջանի վերսկսվելուց հետո պահել նույն տեմպն ու շարունակել բարձրացնել իր արդյունավետության ցուցանիշները: Բուճեսլիգան վերսկսվեց, իսկ Մխիթարյանը շարունակեց ամրապնդել դիրքերը: Գերմանիայի առաջնության 18-րդ տուրում Դորպմունդի «Բորուսիան» հանդիպեց Մյունխենըզլադերախի «Բորուսիային» և հաղթեց 3:1 հաշվով: Մխիթարյանն այս հանդիպմանը դարձավ գոլի և գոլային փոխանցման հեղինակ և «Whoscored.com»-ի վարկածով ստանալով 9.55 գնահատականը՝ ճանաչվեց հանդիպման լավագույն ֆուտբոլիստ: Ինչպես նաև «Whoscored.com»-ի և «Kicker»-ի վարկածով՝ ընդգրկվեց Բուճեսլիգայի